ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 22

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Բերդիկ համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Բերդիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 7 թիվ 7 նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1. Բերդիկ համայնքի 2018 թվականիի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:
2.Բերդիկ համայնքի համայնքապետարանի 2017 թվականի գույքագրման արդյունքների ամփոփման և հաստատման մասին:
3.Բերդիկ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար հաստատելու մասին:
4. Բերդիկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2018 թվականի համար սահմանելու մասին:
5.Բերդիկ համայնքի 2017 թվականի բյուջեի մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 23-Ն

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդիկ համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Բերդիկ համայնի ավագանու
2017թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 23-Ն որոշում

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հաստատել Բերդիկ համայնքի 2018թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նորշենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվությանհամար

ա. շենքերի և շինությունների համար ՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդթվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպեսնաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:

բ) սույնկետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 1000-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:
- 3000-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերեսունեցող շենքերի և շինություններիհամար ՝ 3000 դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 5000 դրամ:
2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման , վերականգման, ուժեղացման , արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով
ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝3000 դրամ:
բ/բացի շենքերի և շինությունների վերկառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսբվում է նաև կցակառույցների, վերնակառույցնեչրի շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսին ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության

Համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:
գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների ,շենքի գավարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա ,սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերիը:
3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար ՝ 5000 դրամ:
4) Համայնքի վարչական տարածքում հեղուկվառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար՝ 200000 դրամ:
5) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներիր և (կամ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյանկի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողի իմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
-51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,
101-ից մինչև 200 քառակուսի մեերի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 21 000 դրամ
6) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացոթյան առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար
7/ համայնքի վարչական տարածքում համայնքի կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տողական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է
ա/հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26 քմ ընդհանուր մակերոս ունեցող հանրային սննդի օբեկտների համար՝ 5 000 դրամ
-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերոս ունեցող հանրային սննդի օբեկտների համար՝ 6 000 դրամ
-51-ից 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար ՝11 000դրամ
-101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի համար 16 000 դրամ,
բ/ ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քմ ընդհանուր մակերոս ունեցող հանրային սննդի օբեկտների համար՝ 1 000 դրամ
-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերոս ունեցող հանրային սննդի օբեկտների համար՝ 2 000 դրամ
-51-ից 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբեկտի համար ՝3000դրամ
-101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի համար 5000 դրամ,
8) Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,

բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը չափով

9) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան,անվանում և այլն) ,որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության , աշխատանքների կատարման ,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ 100 000 դրամ:

10/համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների `միկրոավտոբուսների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար , օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենային համար՝ 10 000 դրամ:

2.Բերդիկ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը՝

1/համայնքի տարածքում 'ինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

2/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնորինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տրեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1000 դրամ,

3/տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 1000 դրամ :

13. Համայնքում իրավաբանական անձանց համար աղբահանության վճար սահմանվում է

յուրաքանչյուր ամսվա համար .

1) Առևտրի /այդ թվում շուկաների /, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 20 << դրամ/ 1 քառ.մ:

2) Կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային շինություններ՝ 2 << դրամ/1 քառ.մ>> :

3) Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանկության շինություններ՝ 4 << դրամ /1 քառ.մ :

4/ աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

ա/ ըստ հաշվառվա ծ անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար առավելագույնը ամսական 100 դրամ կամ

բ/ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերոսի համար՝ առավելագույնը 1 դրամ:

5/ ոչ կենցաղային և խոշոր. եզրաչափի աղբի համար՝

ա/ըստ ծավալի մեկ խորհանարդ մետր աղբի համար առավելագունը 3000 դրամ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 24-Ա

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդիկ համայնքի համայնքապետարանի 2017 թվականի գույքագրման արդյունքները համաձայն հավելվածի:

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 24-Ա որոշում

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

Համայնքի սեփականություն հադիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ.Հարությունյանի, անդամներ՝ համայնքապետարանի վարորդ Ս.Ֆահրադյանի ,համայնքապետարանի գրադարանավար՝ Լ.Հակոբյանի, հիմք ընդունելով 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 33 որոշումը, կազմեցինք սյուն ակտը այն մասին,որ ս/թ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 1-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի, կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների գույքագրում՝

Հ/Հ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՔԱՆԱԿԸ /միավոր/	ԳՈՒՄԱՐԸ /ՀՀ դրամ/	ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
1	Ակումբի շենք	1	7 817 730	առկա
2	Զգեստապահարան	1	103 000	առկա
3	Երկաթյա պահարան	1	14 136	առկա
4	Ջրավազան	1	42 825	առկա
5	Հեռուստացույց	1	150 000	առկա
6	Գազի խողովակաշար	1	11 199 784	առկա
7	Ավտոմեքենա Նիվա	1	3 740 000	առկա
8	Ջահ	2	30 000	առկա
9	Օդորակիչ	1	380 000	առկա
10	Համակարգիչ	1	320 000	առկա
11	Համակարգիչ	2	Նվիրատվություն	առկա
12	Տպիչ սարք	1	150 000	առկա
13	Տպիչ սարք	1	Նվիրատվություն	առկա
14	Սկաներ	1	Նվիրատվություն	առկա
15	UPS -600	1	30 000	առկա
16	UPS-AEG	2	Նվիրատվություն	առկա
17	Գրասենյակային աթոռ	6	72 000	առկա
18	Զուգարանի շենք	1	36 877	առկա
19	Համայնքի ղեկավարի աշխատանքային սեղան, դիմադիր և կողադիր սեղաններ, տումբա	1	140 000	առկա

20	Ավտոմեքենայի զսպի փուչիկ	1	140 000	առկա
21	Ավտոմեքենայի համակարգ	1	360 000	առկա
22	Համակարգչի սեղան	3	165 000	առկա
23	Գրասեղան	2	90 000	առկա
24	Աթոռ	1	150 000	առկա
25	Աթոռ	10	140 000	առկա
26	Գրապահարան	1	170 000	առկա
27	Շերտավարագույր	40քմ	120 000	բացակա
28	Համակարգիչ INTEL 3	1	300 000	առկա
29	Տեսանկարող սարք	6	400 000	առկա
30	Աթոռ ղեկավարի	1	180 000	առկա
31	Ընդունարանի կահույք	1	150 000	առկա
32	Աթոռ գրասենյակի	6	78 000	առկա
33	Նոթբուք	1	400 000	առկա
34	Տպիչ սարք Canon	1	95 000	առկա
	ԸՆԴԱՄԵՆԸ	53 և 40քմ	27 164 352	

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Անդամներ՝ Ս.Ֆահրադյան

Լ.Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂՂ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 25-Ն

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

2018 թվականի հունվարի 1-ից Բերդիկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 230.000/երկու հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26-Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

2018 թվականի հունվարի 1-ից հաստատել Բերդիկ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

Հավելված 1
Բերդիկ համայնքի ավագանու
2017թ.-ի դեկտեմբերի 7-ի թիվ 26-Ն որոշման

Բերդիկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
1. Աշխատակիցների թվաքանակը՝ - 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	230 000
Համայնքային ծառայողներ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1	1	105000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1	1	100000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1	1	80000
Տեխսպասարկման անձնակազմ		
Հավաքարար	1	80000
Հարկահավաք	1	75 000
Վարորդ	1	80000
Այգեպան -ցրիչ	1	75 000
Մշակույթ		
Գրադարանավար	1	80000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	80000
Ընդամենը	10	985 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 27-Ն

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ պահանջներով.

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի ավագանու 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.Կառավարման մարմնի պահպանման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածից 760.000 դրամ տեղափոխել կառավարման մարմնի պահպանման 4112 / պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/ հոդվածին:
2. 4891 /պահուստային միջոցներ / հոդվածից 350.000 դրամ տեղափոխել 4729 / այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին:
3.4891 /պահուստային միջոցներ / հոդվածից 500.000 դրամ տեղափոխել 5113 / շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / հոդվածին:
4.5113/ արտաքին լուսավորության ցանցի հիմնում/ հոդվածից 1.000.000 դրամ տեղափոխել կառավարման մարմնի պահպանման 5112 / շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:
5.4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 830.000 դրամ տեղափոխել կառավարման մարմնի պահպանման 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:
6. 4891/ պահուստային միջոցներ /հոդվածիվ 200.000 դրամ տեղափոխել 4269 /մշակութային միջոցառումների իրականացում / հոդվածին:
7.4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից 600.000 դրամ տեղափոխել կառավարման մարմնի պահպանման 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին:

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ